

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 19/5

15 ապրիլի 2014 թ.

Քննարկվեց «Պրոֆարտշին» ՍՊԸ դիմումը ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում թույլ տրված մեխանիկական սխալի մասին:

«Պրոֆարտշին» ՍՊԸ դիմումում բերված փաստարկները.

«Պրոֆարտշին» ՍՊԸ կողմից 2014 թ-ի մարտի 26-ին էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ է ներկայացվել հայտարարություն ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին համապատասխան: Սակայն, հայտարարությունում սխալմամբ ԱԱՀ վճարող համարվելու ժամկետ է նշվել 2014/12/31-ից մինչև օրացուցային տարվա ավարտը՝ փաստորեն ոչ մի օր:

Ըստ դիմումի, վերոգրյալ սխալը տեղի է ունեցել թյուրիմացաբար, անուշադրության պատճառով, այլ ոչ թե միտումնավոր:

Ելնելով վերոգրյալից «Պրոֆարտշին» ՍՊԸ-ն խնդրում է հնարավորություն ընձեռնել ուղղել տեղի ունեցած սխալը, այսինքն՝ ավելացված արժեքի հարկ վճարող համարվել 2014/01/01 թ-ից մինչև օրացուցային տարվա ավարտը:

Ընկերությունը տեղեկացնում է նաև, որ 2014 թ-ի հունվարի 8-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ է ներկայացվել հայտարարություն, որպես ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառվելու և ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում արձանագրվեց այն փաստը, որ «Պրոֆարտշին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև ընկերություն), ղեկավարվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի դրույթներով, 2014 թ-ի մարտի 26-ին էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ է ներկայացրել ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն: Սակայն, հայտարարությունում թյուրիմացաբար ԱԱՀ վճարող համարվելու ժամկետ է նշվել 2014/12/31-ից մինչև օրացուցային տարվա ավարտն ընկած ժամանակաշրջանը: Ընդ որում հարկ է նշել, որ ընկերության կողմից սահմանված կարգով ներկայացվել է 2014 թ-ի 1-ին եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկը:

Քննարկվող դեպքում հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն, «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել

պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում ԱԱՀ վճարող համարվելու ժամկետը սխալ է նշվել թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը կրում է ձևական բնույթ, քանի որ ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով ըստ էության կատարված են:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ ընկերությանը անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել ճշտել թույլ տրված սխալը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. «Պրոֆարտշին» ՍՊԸ դիմումը բավարարել:
2. Ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում ԱԱՀ վճարող համարվելու ժամկետը համարել 2014/01/01 թ-ից մինչև օրացուցային տարվա ավարտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ